ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐԱՀԱՅՏ ՆՅՈՒԹԵՐ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ

Լեռնային Ղարաբաղի տարածքում վերջին տարիներին կատարված դաշտային-հողային աշխատանքների ժամանակ ի հայտ են եկել բավականին հնագիտական նյութեր։ Ստորև ներկայացնում ենք Ստեփանակերտի շրջանի Դաշբուլաղ, Բալլուջա գյուղերի և Ասկերան ավանի մոտ գտնվող դամբարանների ուսումնասիրությունների արդյունքները։

«Միջրվարեն խութի» դամբարանադաշտը — 1973 թ. Դաշբուլաղ գյուղի «Միջրվարեն խութ» կոչված վայրում, որը գտնվում է գյուղից 3 կմ հարավ-արևելք, բուլդոզերով տեղանքը հարթելու ժամանակ բացվել են հիմնահողային 5 դամբարաններ. դրանք ուղղված էին հյուսիս-արևմուտք և ծածկված էին մանր քարերով։ Առաջին դամբարանում հայտնաբերվել են զենքեր, զարդեր և երեք կավանոթ։ Մյուս չորս դամբարաններից գտնվել են կավանոթ, դավազանի գլուխ, ասեղ և բազմաթիվ զարդեր։ Առաջին դամբարանի նյութերը կարևոր են տվյալ դամբարանադաշտի ուսումնասիրության համար։ Այստեղ գտնված զենքերից է 12 ատամնավոր ելուստներ ունեցող գուրզը (տախտակ I, նկ. 1)։ Նման գուրզ Ղարաբաղում գտնվել է նաև Առաջաձորում[1]։ Այս տիպի գուրզեր հայտնի են նաև Ա. Ա. Իվանովսկու՝ Ղարաբուլաղի[2] (Կարյագինո) և Ե. Լալայանի՝ Նոր Բայազետի[3] դավառում կատարած պեղումներից։ Բացի գուրզից գտնվել է նաև տափակ, եռանկյունաձև շեղբով դաշույն՝ երեք զուգահեռ միջանկյալ ողերով և ծակոտկեն դաստակով, որն ավարտվում է նույնպես ծակոտկեն գլխիկով. երկարությունը 25 սմ է (տախտակ I, նկ. 2)։ Դաշույնի շեղբը և դաստակը միանում են խոշոր, ուղղանկյուն ելուստով, որը զարդարված է հորիզոնական երեք գծերով։ Շեղբի և դաստակի միացման նման ձևը հայտնի է մ. թ. ա. XIV—XIII դդ. (Լճաշեն)[4] և հարատևում է մինչև մ. թ. ա. առաջին հազարամյակի սկիզբը։ Մեծ հետաքրքրություն է ներկայացնում ծակոտկեն բռնակը, որի նմանները հայտնի են նաև Կարմիր բերդից (Թազաբեկ)[5], Գետաբեկից[6] և թվագրվում են մ. թ. ա. XIII—VIII դդ.։

Առաջին դամբարանից հայտնաբերվել է նաև խողովակաձև կոթառով նիզակ՝ նեղ, երկար սայրով, որի կենտրոնով անցնում է միջանկյալ մեծ ող։ Նիզակի երկարությունը 35 սմ է, սայրի լայնությունը՝ 3 սմ (տախտակ I, նկ. 3)։ Սա նման է Դիլիջանի, Կիրովականի, Ուղունթափայի և Անդրկովկասի այլ հուշարձաններից հայտնաբերված նիզակներին[7], որոնք թվագրվում են ուշ բրոնզեդարի ու վաղ երկաթի դարերով։ Դամբարանից գտնված զենքերից են նաև օբսիդյանից պատրաստված 3 նետասլաքները, որոնք նշաձև են, վերին և ստորին մասում ունեն ուղղանկյուն և կիսակլոր փոսիկներ՝ փայտին միացնելու համար (տախտակ I, նկ. 4)։ Այդպիսի նետասլաքներ առաջին անգամ հանդիպում են մ. թ. ա. XIV դ. և հարատևում են մինչև մ. թ. ա. VI դ. (Լճաշեն, Արթիկ, Կամո, Մակարաշեն, Ռեգինլաքեր, Կարմիր բլուր, Առաջաձոր, Գետաբեկ, Թրիալեթի և Հայաստանի ու Անդրկովկասի շատ այլ հուշարձաններ)[8]։

---

1 *Պահպանվում է Ստեփանակերտի մարզային պատմաերկրագիտական թանգարանում՝ 4520 գույքահամարի տակ։*

2 А. А. Ивановский, По Закавказью («Материалы по археологии Кавказа», вып. VI, М., 1911, табл. XV, рис. 1, 2).

3 *Ե. Լալայան, Դամբանների պեղումներ Խորհրդային Հայաստանում, Երևան, 1931, էջ 165, նկ. 130։*

4 С. А. Есаян, Оружие и военное дело древней Армении, Ереван, 1966, с. 63, табл. XI, рис. 10.

5 А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964, с. 84, рис. 39.

6 Д. А. Халилов, Археологические памятники западного Азербайджана в эпоху бронзы и начала железного века, Баку, 1959, с. 75, табл. XII, рис. 9, с. 100, табл. XX, рис. 206 (на азерб. языке).

7 С. А. Есаян, Оружие и военное дело..., с. 18—19.

8 С. А. Есаян, Оружие и военное дело..., с. 45—47; К. Х. Кушнарева, Не-

Այս դամբարանի զարդերն են. հեռացած ծայրերով 1 բրոնզե ապարանջան (տախտակ I, նկ. 7), 6 բրոնզե օղ, որոնք 4 տիպի են՝ օղաձև, հեռացած ծայրերով, իրար վրա անցնող ծայրերով և ոլորապտույտ (տախտակ I, նկ. 5)։ Գտնվել են նաև 4 մանր բրոնզե կոճակ (տախտակ I, նկ. 6), որոնք սկավառակաձև են և ունեն երկուական անցքեր։ Այս զարդերը հայտնի են Հայաստանի ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջաններում և, իհարկե, թվագրող նյութ չեն կարող ծառայել։

Տախտակ I

Դամբարանի թվագրման համար կարևոր են այստեղ գտնված 3 կավանոթները, որոնցից մեկը սև գույնի, անփայլ, մեկ կանթանի զավաթ է՝ ուռուցիկ իրանով, կարճ վզով, դուրս ճկված կլոր շրթով, հարթ հատակով։ Մի ուրիշ ուղղահայաց տեղադրված է կտրվածքում կիսակլոր կանթը։ Իրանի ստորին մասը վատ

которые памятники эпохи поздней бронзы в Нагорном Карабахе («Советская археология», XXVII, 1957, рис. 2); А. А. Иванов ский, *նշվ. աշխ.*, էջ 157—164; Д. А. Халилов, Археологические памятники западного Азербайджана..., с. 73—75; В. А. Куфтин, Археологические раскопки в Триалети, Тбилиси, 1941, табл. CVI; А. А. Мартиросян, Раскопки в Кировакане и некоторые памятники раннеурартского периода («Известия общ. наук», АН Арм. ССР, 1956, № 9, с. 64).

Քրման հետևանքով գորշ գույն է ստացել (տախտակ I, նկ. 8)։ Երկրորդ կավանոթը սև գավ է՝ փայլեցված, ուռուցիկ իրանով, կարճ վզով, դուրս ճկված կլոր շրթով, հարթ-հատակով։ Մի ուսին ուղղահայաց տեղադրված է կտրվածքում կիսակլոր կանթը։ Իրանի վերին մասը զարդարված է փայլեցման եղանակով կատարված ուղղահայաց գծերով, իսկ իրանի կենտրոնով անցնում է ներճկված երեք հորիզոնական գիծ (տախտակ I, նկ. 9)։ Այսպիսի անոթները լայն տարածում ունեին մ. թ. ա. երկրորդ հազարամյակի վերջին և առաջին հազարամյակի սկզբին (Ռեզկին-լագեր, Արթիկ, Կարմիր բերդ և այլն)։ Երրորդ անոթը սև սափոր է՝ երկկոն իրանով, կարճ վզով, փոքրինչ դուրս ճկված շրթով և լայն հատակով։ Կտրվածքում կլոր բռնակը, շրթից փոքր-ինչ բարձրանալով միանում է անոթի ուսին։ Իրանի վերին մասը զարդարված է բազմաշար ուղղահայաց ժապավեններով և ցանցով՝ կատարված փայլեցման եղանակով (տախտակ I, նկ. 10)։ Այս զարդամոտիվը բնորոշ է ուշ բրոնզի և վաղ երկաթի դարի սկզբի խեցեղենի համար և լայնորեն տարածված էր Արթիկում[9], Ռեզկին-լագերում[10], Էլլարում[11]։

«Միջբվարեն խութի» առաջին դամբարանից հայտնաբերված նյութերը հնարավորություն են տալիս այն թվագրել մ. թ. ա. երկրորդ հազարամյակի վերջով և մ. թ. ա. առաջին հազարամյակի սկզբով։ Այդ թվագրությանը չեն հակասում նաև մյուս չորս դամբարաններից գտնված նյութերը՝ դավազանի բրոնզե մեկ գլխիկ (տախտակ II, նկ. 11), մեկ ասեղ (տախտակ II, նկ. 4), մեկ կավանոթ և բազմաթիվ զարդեր։ Կավանոթը սև, անփայլ, ուռուցիկ իրանով մի կանթանի սափոր է՝ կարճ վզով, կլոր, դուրս ճկված շրթով, հարթ, թույլ ներճկված հատակով։ Կտրվածքում կլոր կանթը, քիչ բարձրանալով շրթից, իջնում է դեպի անոթի ուսը. վիզը զարդարված է բազմաշար, ուղղահայաց, թույլ ներճկված գծիկներով, իսկ իրանի վերին մասը՝ ներճկված երկու հորիզոնական գծերով (տախտակ II, նկ. 1)։ Նման անոթներ հայտնի են նաև Դաշբուլաղ գյուղի «Տանձատափի»[12], Մակարաշենի[13], Նոյեմբերյանի[14], Աստղի բլրի[15] և մ. թ. ա. առաջին հազարամյակի սկզբով թվագրվող այլ հուշարձաններից։ Այս դամբարանների զարդերը բաղկացած են տարբեր չափի ապարանջաններից, որոնցից երկուսի վրա հագցված են մանր օղեր, իսկ ապարանջանի միացնող ծայրերը ծածկված են սարդիոնե ուլունքներով (տախտակ II, նկ. 3, 5, 6, 7, 9)։ Գտնվել են սարդիոնե բազմաթիվ ուլունքներ, շաղախից բաժանարար (տախտակ II, նկ. 8, 14, 15, 16), բրոնզե փոքրիկ կոճակ, տանձաձև ու խողովակաձև, ծայրերը սուր կախիկներ (տախտակ II, նկ. 2, 12, 17), նաև քարից պատրաստված կախիկ-ամուլետ, որը կարդարված է ցանցաձև նախշերով և վերևում ունի փոքր անցք՝ կախելու համար (տախտակ II, նկ. 13)։ Հատկապես հետաքրքրական է մի բրոնզե ֆիբուլա, որն ունի մատները ծալած մարդու ձեռքի տեսք (տախտակ II, նկ. 10) և, որքան մեզ հայտնի է, առաջին անգամ է հանդիպում Անդրկովկասի նշված ժամանակաշրջանի հուշարձաններում։

Այսպիսով, գտնված նյութերը հետաքրքիր են մ. թ. ա. երկրորդ հազարամյակի վերջի և մ. թ. ա. առաջին հազարամյակի սկզբի նյութական մշակույթի ուսումնասիրման համար և ցույց են տալիս, որ «Միջբվարեն խութի» դամբարանադաշտը թվագրվում է մ. թ. ա. XII—IX դդ.։

Բալլուջա գյուղի դամբարանադաշտը—1968 թ. Բալլուջա գյուղի հյուսիսային մասում (ներկայիս դպրոցի տեղում) պատահականորեն բացվել են մի քանի հողափոր դամբարաններ, որոնք գտնվում էին գետնի մակերեսից 50—60 սմ. ցածր։ Հետազոտությունից պարզվեց, որ դրանք ուղղված էին դեպի հյուսիս-հարավ և ունեին 1,8—2,5 մ խորություն։ Կմախքները մեջքի վրա էին, գլխով դեպի հյուսիս։

Գտնված սակավաթիվ նյութը բաղկացած է մեկ նիզակից, մեկ ասեղից, մի քանի զարդերից և կավանոթներից։ Նիզակը (տախտակ III,

---

9 Т. С. Хачатрян, Древняя культура Ширака, Ереван, 1975, рис. 138, 142.

10 С. А. Есаян, Древняя культура племен северо-восточной Армении, Ереван, 1976, табл. 100—102.

11 Է. Վ. Խանզադյան, Էլլառ-Դարանի, Երևան, 1979, աղ. 16։

12 Յու. Ասրյան, Հնագիտական նորույթներ Լեռնային Ղարաբաղում («Պատմա-բանասիրական հանդես», 1973, № 2, էջ 296, աղ. 3, նկ. 14)։

13 А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы..., табл. XXX, рис. 5.

14 Ս. Ա. Ջիլինգարյան, «Հարանաքարի հողերի» դամբարանադաշտը (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1969, № 10, տախտակ 1)։

15 С. А. Есаян, Древняя культура племен..., табл. 120.

նկ. 9) երկաթից է՝ լայն, խողովակաձև կոթառով և կարճ, տերևաձև սայրով, որի կենտրոնով անցնում է միջանկյալ ողն։ Ասեղը պատրաստված է բրոնզե լարից և վերին մասում ունի անցք (տախտակ III, նկ. 7)։ Զարդերից են՝ քառակող, ծակոտկեն կախիկը (տախտակ III, նկ. 8), բրոնզե խողովակը (տախտակ III, նկ. 10), սարդիոնե ուլունքները (տախտակ III, նկ. 11)։ Հատկապես հետաքրքրական են ծակոտկեն երկու այլ բրոնզե կախիկներ (տախտակ III, նկ. 6), որոնք ունեն կարճ, խողովակաձև տեսք, եզրերը՝ ուռուցիկ և կենտրոնում փոքրիկ օղակներ՝ կախելու համար։ Նման տիպի ծակոտկեն կախիկներ, որքան մեզ հայտնի է, հանդիպում են առաջին անգամ, սակայն այդ տիպի ոսկյա և բրոնզե ուլունքներ հայտնի են Լճաշենից, Արթիկից, Ռեդկին-լաղերից, Օշականից և ուշ բրոնզի ու վաղ երկաթի շրջանի այլ հուշարձաններից։ Կավանոթները գորշ և սև լայնաբերան սափոր-



Տախտակ II

ներ են, որոնցից մեկը զարդարված է բազմաշար գծերով (տախտակ III, նկ. 1, 2, 3)։ Գտնվել են նաև գորշ գույնի մի այլ սափորի բեկոր, որի մեկ ուսին պահպանվել է սեղանաձև կանթ (տախտակ III, նկ. 5) և միկանթանի, սև, փայլեցված գավաթ (տախտակ III, նկ. 4), որի իրանը զարդարված է շերտաններով, կետազարդ, գծային նախշերով և իրանի կենտ-

Լրաբեր 9—7

բոնով անցնող ուռուցիկ հինգ եզրաձևերով։ Հետաքրքրական է գավաթի կանթը, որը շրթից և իրանից փաքր-ինչ բարձրանում է, կենտրոնում ունի գոգավորություն և ստեղծում է կենդանակերպ կանթի տեսք։ Նշված նյութերը հուշարձաններից՝ Ռեգիին-լաքերից, Դիլիջանից, Շամախյանից[16], Մակարաշենից[17] և այլ վայրերից։ Երրորդը՝ մեկ կանթանի, սև սափոր է՝ վիզը և շուրթը շարդված. իրանի վերին մասը զարդարված է ուղղահայաց, բաղմաշար գծե-



Տախտակ III

թվագրվում են մ. թ. ա. առաջին հազարամյակի սկզբով։

Ոսկեռան ավանի դամբարանադաշտը—1971 թ. ավանի արևմտյան մասում, «Փիփերթաձոր» կոչվող վայրում, սարալանջից հոսող անձրևաջուրը բացել էր հողափոր երկու դամբարան, որոնք ծածկված էին մանր քարերով։ Դրանցից մեկում կային մեջքի վրա պառկած մի կմախք՝ դեմքով դեպի հարավ-արևելք, և պահպանված 3 անոթ։ Այդ անոթներից մեկը անկանթ սափոր է՝ ուռուցիկ իրանով, կարճ վզով, խոշոր, կլոր շրթով։ Վիզը զարդարված է ուղղահայաց, թույլ գծիկներով (տախտակ IV, նկ. 14)։ Մյուսը միկանթանի, սև, տանձաձև իրանով սափոր է՝ երկար վզով և կլոր, դուրս ճկված շրթով։ Ունի լայն, հարթ հատակ. կորվածքում կլոր կանթը վզիկի վերին մասից իջնում է մինչև իրանի վերին մասը։ Վիզը և իրանի վերին մասը զարդարված են հորիզոնական գծերով. կենտրոնով անցնում են եռանկյունաձև շեղոններ՝ լցված կետաշարդ նախշերով (տախտակ IV, նկ. 13)։ Նման նախշերով անոթներ հայտնի են Հայաստանի վաղ երկաթի դարի թվագրվում են մ. թ. ա. առաջին հազարամյակի սկզբով։

Ոսկեռան ավանի դամբարանադաշտը—1971 թ. ավանի արևմտյան մասում, «Փիփերթաձոր» կոչվող վայրում, սարալանջից հոսող անձրևաջուրը բացել էր հողափոր երկու դամբարան, որոնք ծածկված էին մանր քարերով։ Դրանցից մեկում կային մեջքի վրա պառկած մի կմախք՝ դեմքով դեպի հարավ-արևելք, և պահպանված 3 անոթ։ Այդ անոթներից մեկը անկանթ սափոր է՝ ուռուցիկ իրանով, կարճ վզով, խոշոր, կլոր շրթով։ Վիզը զարդարված է ուղղահայաց, թույլ գծիկներով (տախտակ IV, նկ. 14)։ Մյուսը միկանթանի, սև, տանձաձև իրանով սափոր է՝ երկար վզով և կլոր, դուրս ճկված շրթով։ Ունի լայն, հարթ հատակ. կորվածքում կլոր կանթը վզիկի վերին մասից իջնում է մինչև իրանի վերին մասը։ Վիզը և իրանի վերին մասը զարդարված են հորիզոնական գծերով. կենտրոնով անցնում են եռանկյունաձև շեղոններ՝ լցված կետաշարդ նախշերով (տախտակ IV, նկ. 13)։ Նման նախշերով անոթներ հայտնի են Հայաստանի վաղ երկաթի դարի

---

16 С. А. Есаян, Древняя культура племен..., табл. 106, 114, 115, 118.

17 А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы..., рис. 79 «а».

18 L. D. Morgan, Misson scientifique au Caucase. Paris, I, 1889, S. 148.

19 Հ. Հ. Մնացականյան, Դամբարանների պեղումներ Գոլովինո գյուղում («Հայաստանի պետական պատմության թանգարանի աշխատություններ», պրակ 5, Երևան, 1959, նկ. 24)։

20 А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы..., табл. XXVIII, рис. 1.

շագույն կավե սափոր. վերջինս ունի գնդաձև իրան, կարճ վիզ, խոշոր, դուրս ճկված շուրթ, լայն, հարթ հատակ։ Շրթից փոքր-ինչ բարձրանալով, դեպի իրանի վերին մասն է իջնում կիսակլոր կանթը. այն զարդարված է խոր, թեք ակոսներով, որոնք բռնակին տալիս են ոլորվածքի տեսք։ Վիզը զարդարված է բազմաշար հորիզոնական գծերով (տախտակ IV, նկ. 15)։ Այդ տիպի կանթով անոթներ հայտնի են Դավիթ-Բեկից[21] և Զանգեզուրի այլ հնավայրերից. դրանք թվագրվում են մ. թ. ա. երկրորդ հազարամյակի վերջով և մ. թ. ա. առաջին հազարամյակի սկզբով։ Հետևաբար, այս գամբարանը ևս թվագրվում է նույն ժամանակաշրջանով։

Ուսումնասիրությունների շնորհիվ առանձին նյութեր են գտնվել նաև Դաշբուլաղ գյուղի այլ վայրերից։ Դրանցից են «Բլանց բաղ» կոչվող

Տախտակ IV։

տեղամասի գամբարանները, որոնք գտնվում են գյուղից հարավ-արևելք՝ 4 կմ հեռավորության վրա։ Հողային աշխատանքների ժամանակ ավերված մի գամբարանից գտել ենք մի քանի մետաղյա իրեր, որոնց թվում՝ երկաթե ածելիտեսք դանակ (տախտակ IV, նկ. 9). նմանատիպ դանակներ հայտնի են Սևանի ավազանից, Օշականից, Մինգեչաուրից և մ. թ. ա. երկրորդ

21 Նույն տեղում, էջ 147, նկ. 60։

հազարամյակի վերջով ու մ. թ. ա. առաջին հազարամյակի սկզբով թվագրվող այլ հուշարձաններից։ Գտնվել են նաև սևանյան տիպի դաշույնի բրոնզե գլխիկ, մեկ նետասլաք, զանգակաձև, մամիշ բրոնզե, ինչպես նաև քարե կախիկներ, մեկ ապարանշան՝ պատրաստված բրոնզե լարից (տախտակ IV, նկ. 1, 2, 3, 4, 6)։ Այս իրերը ստույգ թվագրվում են մ. թ. ա. IX—VIII դդ., որի ճշտությունը պայմանավորված է սևանյան տիպի դաշույնի գլխիկով։

Նույն դամբարանում, որի խորությունը 0,7 մ է, մակերեսից 0,3 մ խորության վրա գտնվեցին մարդկային ոսկորների մնացորդներ և երկաթե երկու ապարանշան (տախտակ IV, նկ. 7, 8)։ Դրանցից մեկը փոքր-ինչ հեռացած ծայրով է և պատրաստված է ոլորված լարից, մյուսի ծայրերը օձագլուխ են, մեջքը ներճկված։ Այդ տիպի ապարանշաններ հայտնի են վաղ հայկական և անտիկ շրջանի Հայաստանի ու Անդրկովկասի հուշարձաններից, որը հնարավորություն է տալիս այդ իրերը թվագրել մ. թ. ա. V—IV դդ.։ Միաժամանակ նշենք, որ այդ դամբարանում կատարված է կրկնակի թաղում։

Դաշբուլաղ գյուղի մյուս հնավայրը «Դադունց խմահատն» է, որը գտնվում է գյուղից 1 կմ հյուսիս-արևմուտք։ Այստեղ պատահականորեն բացված դամբարանից, մարդու քայքայված կմախքի մոտ, գտնվել են բրոնզե 2 նետասլաք, քարե սկավառակաձև իր, քարե տրորիչ (շարդված) և կրաքարե երկու խոշոր ուլունքներ (տախտակ IV, նկ. 5, 5ա, 10, 11, 12)։ Նետասլաքները տերևաձև են՝ կենտրոնով անցնող խոշոր միջանկյալ ողով, որը հասնում է կարճ պոչուկին՝ փայտին միացնելու համար. ստորին ծայրերը փոքր-ինչ կախված են։ Այս իրերը, բացի նետասլաքներից, թվագրող նյութեր չեն կարող հանդիսանալ։ Ինչ վերաբերում է նետասլաքներին, ապա այդ տիպի նետասլաքներ հայտնի են Կամոյից, Ստեփանավանից, Այրիվանքից, Նորադուզից, Գետաբեկից, Խոջալուից, Մինգեչաուրից և այլ վայրերից ու թվագրվում են մ. թ. ա. երկրորդ հազարամյակի վերջով և մ. թ. ա. առաջին հազարամյակի սկզբով[22]։

Ստեփանակերտի շրջանի դամբարաններից հայտնաբերված նյութերը կարևոր լրացում են Լեռնային Ղարաբաղի այս շրջանի քիչ ուսումնասիրված ուշ բրոնզեդարի վերջի և վաղ երկաթի դարի սկզբի մշակույթի ուսումնասիրության համար։ Միաժամանակ դրանք ցույց են տալիս, որ այս ժամանակաշրջանի Ղարաբաղի տեղաբնիկները ունեցել են զարգացած մշակույթ, որը սերտորեն կապված է եղել Հայկական բարձրավանդակի այլ շրջանների նույն ժամանակի մշակույթի հետ։

ՅՈՒՐԻ ԱՍՐՅԱՆ

---

22 С. А. Есаян, Оружие и военное дело..., с. 48, табл. IX.